414բ · չարթու · եւ աւուրց, այլ ամսոց երից սորին յերկարել եւ գծելցն · վրէժ ոչ կչիռ հատցլ : Եւ այս աղէտ անդերծ տարակուսից շրջապատել · զմեզ շրջագայութ · տոմարի Հայկազեան սեռից հարիւրից կրկնակի քառից եւ վեցեակ վեցից : Յորում ամի եղեւ ծառայութիկն ազգին կոչեցեալ յունաց · ի վերոյ ասացելն · յաւուր նորոյս տրունեաց : Եւ այսպէս տրմել · հզվ · և թաղծել · մտօք ընծայեցի տխեղծ մտմբ · զխուռնախոյս նուէրս բանի, իբրեւ զլումայս այրւոյն քումդ գանձարանի : Եւ մաղթեմ եղբայրական սիրով, զի ըս · բնածին բարէբոյս բարուցս՝ աչխուժ մտօք ուղղապ · որոնել · զթերին լնուլ եւ զաւելորդն կչռել · հաւանելեացն տն · շնորհ եւ սը/ խալանացն տկարս անօթոյ, միայն բարեաէր կամօք՝ յիշատակ բարի առ քոյդ արձանագրեսցի ի տր : Ողջ եր :*

---

*Հարցմունք Գէորգ վրդպի · եւ լուծմունք Գրիգորի (Տաթեւացւոյն) նորին հարազատի · «Գիր քոյոյ վսեմամիտ···»

Այս գրութեան վերջումն է վերոգրեալ յիշատակարանը եւ կապ ունի սորա հետ :

Հարցմանց գիրք Տաթեւացու · տպած Կ · Պօլիս · ՌՃՀԷ :

Ալիշան · Սիսական 239, 481 : Քաղուածօրէն Թօփչեան · Սմբատեան, Երնջակ · 279 :

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ · 13 · ՉԿԱՑ

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ · 14 ·

Ա · Գիրք · 115

ՓԻՐՂԱԼԷՄԵԱՆ · ՆՇԽԱՐՔ ·

1335 ՉՁԴ, թիւ 92, հատուած, թիւ 60 ճաշոցին · (*)

Յանուն Աստուծոյ եւ կարողութեամբ սուրբ Հոգւոյն ես պարոն Հայրուտս չինեցի զաղօթանոցն մեր սուրբ մենաստանացս զՔարի վանուցս, զԹանահատի վանուց, եւ զսուրբ Կաթուղիկէիս · զի այն էր խնդրուածք իմ յԱստուծոյ, եւ գնեցի ի Սապուխի որդոյ Մահմատայ զձորի յեղեր ձիթահանքն սուրբ Կաթուղիկէիս լուսացու, եւ ետու ի ձեռն Իբրանոս քահանային (նոյն Ճաշոցի ստացողին) վասն փրկութեան հոգւոյ իմոյ եւ արեւշատութեան զաւակաց իմոց : Ես Առաքել վարդապետս միջնորդ եւ վկայ եմ էս հաստատ եւ անդարձ վախմիս, ի թուաբերութեանս հայկազեան տոմարի ՉՁԴ ·

(*) Գրուած է ձեռամբ «անարհեստ գրչի Լեւոնի մեղապարտ քահանայի տիրացու (կոչեցելոյ), ի խընդրոյ սրբասէր եւ աստուածահաճոյ Ղպրիանոս քահանայի ի թուին Հայոց ՉԿ» :

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ · 15–21 ՉԿԱՑ ·

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ · 22 ·

Ա · Գիրք · 188

Փիրղալէմեանի · Նշխարք Պատմութեան Հայոց · հատոր Բ · (ձեռագիր) ·

1318 ՉԿԷ : Թ · 70 · Մի հին կանոնագրքէ : 1881 Յուլ · 9–ի Բաղէշ ի վանս Ամրդօլայ :

Զներհուն հռետորն հանուրց Հայկազանց եւ լուսատու ջահն մանկանց եկեղեցւոյ, զմեծ պետն վարժից Եսայի · աղաչեմ յիշել ի Քրիստոս հանդերձ ծնողօք եւ ամենայն զարմիւք : Եւս եւ զհոգեւոր երկամբք ծնեալ որդեակ իւր զերանաշնորհ եւ մաքրամիտ քահանայն զՏիրացուն աղաչեմ յիշել հանդերձ ծնողօք եւ եղբարբք : Նաեւ զմեղսամակարդ ոգի Յակոբ Թագորցի, որ հրամանաւ մեծ րաբունապետիս աւարտեցի զթերիս սրբ · պայծառ ճառիցս զղանա (?) պետութիւնս, զոր դարձեալ աղաչեմ յիշել միով տէր ողորմայիւ եւ զծնողսն իմ, եւ Աստուած յիշողացդ ողորմեսցի · եւ նմա փառք յաւիտեանս ամէն :

Ի թուին Հայոց տոմարի ՉԿԷ (1318) եւ նախ քան զմտանել ամիս, փոխեցաւ առ Քրիստոս մեծ եւ փառաւոր սկայազուն իշխանն Խաչի, թոռն հռչակաւոր իշխանին Պռօշայ եւ որդի մեծին Ամիր Հասանայ, զոր Աստուած ողորմեսցի, ամէն :

ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ · 23 ·

Ա · Գիրք · 199 · 209 ·

Փիրղալէմեան · Նշխարք · 1321 ՉՀ : Թիւ 75 · Մի մագաղաթեայ աւետարանէ · 1877 · Նոյեմբ · 23, ի Լոնդրայի Թանգ ·

Փառք ամենասուրբ Երրորդութեանն · · · :

Արդ գրեցաւ սա ի թվաբերութեան մերոյս հայկազեան տոմարի ՉՀ (1321) ի դառն եւ անբարի ժամանակիս, յորում ունէր զբռնակալութիւն բոլոր աշխարհ(իս) Հայոց եւ Վրաց ազգէն (զուցէ ազգն) Նետողաց : Ի թագաւորութեան Վրաց Գորգէն կոչեցելոյ եւ Հայոց մեծաց թագաժառանգ թագաւորին մերոյ Լեւոնի · Եւ ի հայրապետութեան տէր Կոստանդեայ : Եւ ի վերադիտողի տանս Սիւնեաց տէր Յովհաննէսի (Օրբէլեանն է) եւ տէր Ստեփանոսի : Եւ ի զօրավարութեան եւ իշխանութեան զաւառացս, յորում եմք, Բուրթելի եւ Ամիր Հասանայ : Եւ ի վարժապետութեան սուրբ եւ բազմերջանիկ քաջ հռետորաց հայոց, երկուց ամոլաց ճշմարիտ հաւատոց մերոց Դաւթի (զուցէ Քոփայրեցին է)* եւ Եսայեա (Նչեցւոյ) ի հռչակաւոր եւ սուրբ մենաստան համալսարանիս Գլաձորոյ, ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոսի և աստուածընկալ վերաալացեալ(s!) դպրապետացս, ձեռամբ մեղսամակարդ եւ տարաշ-